

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏԵԱՆ ԹԵՄԻ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ,
ՈՐ Ի ԿՈՒՓԵՐԹԻՆՕ, ԱՄՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր անդրանիկ օրհնությունը եւ ողջոյններն ենք յղում Ձեզ, սիրելի հոգեւոր հայրեր ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի, որ, զլիաւորութեամբ բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի, Կուփերթիսո բաղաթի Ս. Անդրէաս եկեղեցում համախմբուած էք հանրագումարի թերկու անցնալ փարուայ Ձեր ծառայութեան արդիւնքները եւ միասին ծրագրաւորելու առաջիկայի անելիքները:

Սիրելիներ.

«Ոչ խթ եւնձամբ որ առնու պարիս, այլ կոչեցեալն յԱստուծոյ» (Եբր. Ե 4): Բարձրեայի վերին կոչմամբ Դուք կարգուած էք Իր փոքրիկ հօգի՝ բարեպաշար եւ աստուածասէր հայ ժողովրդի հոգեւոր սպասաւորութեան գործին, որոնք շուրջ երկու հազար փարիներ առաջ «զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշական ճաշակեցին» ձեռամբ Տիրոջ գոյգ՝ Թաղէս եւ Բարդուղիմէոս առաքելների:

Քաջարեւելակ ենք ի շահ ազգի ու եկեղեցու՝ Ձեր նուիրեալ ու անյոգնաբեկ ծառայութեանը եւ միշտ ուրախակից ենք Ձեզ: Ձեր արդիւնատու գործունէութեան բաղդը պարտկները փեսանելի են նաեւ Մայր Հայրենիքում, ուր Ձեր քաջալերանքով եւ Ձեր նախաձեռնութեամբ իրագործուած են բազում բարեսիրական ծրագրեր՝ կրթութեան, առողջապահութեան, ընկերային, սոցիալ-փութեսական եւ այլազան ոլորտներում, ի շինութիւն ազգային մեր կեանքի եւ ի բարօրութիւն մեր ժողովրդի:

Բարձր ենք գնահատում Ձեր սէրն ու հաւաքարմութիւնը Մայր եկեղեցու եւ Լուսոյ Լսորան Սուրբ Էջմիածնի նկարմամբ եւ ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ Բարձրեայի օրհնութիւնն ու օգնականութիւնը հայցելով Ձեզ ամենքիդ:

Հայրապետիս յորդորն ու պարգամն է, սիրելի հոգեւոր հայրեր, որ Դուք հեփայսու եւս անձանձրոյթ շարունակէք Ձեր նուիրեալ ծառայութիւնը մերազնեայ գաւակաց՝ նրանց հոգու ու մտաց հայեացքը միշտ ուղղելով դէպի Ամենայն Հայոց

հաւարի 1700-ամեայ նուիրական օրրանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, դէպի Նայրենիքը մեր, որ սուրբ նախնեաց զօրեղ հաւարով շնորհընկալը եղաւ նաեւ Միածնի էջի:

Թող Տէրը զօրացնի Ձեզ Ձեր կոչման մէջ եւ պարգեւի քաջամողջ արեւշարութիւն՝ երջանկութեամբ ու ազգաշահ ձեռքբերումներով լեցուն, ի պայծառութիւն ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի եւ Առաքելահասարակ մեր Սուրբ Եկեղեցու:

«Այնպէս լուսաւորեսցէ լոյս Ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զգործս Ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՆայրն Ձեր, որ յերկինս է» (Մաթթ. Ե 16):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Գիրս Օրհնութեան

ի 27-ն մարտի

ի թուին Տեառն 2000

եւ ի թուին Նայոց ՌՆԽԹ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ 23

